Յակոբայն: Իսկ զմեկնութիւն Երգերգոցին համառօտ բանիւ եւ համեղ եղանակաւ: Նաեւ զանձս քարոզից տերունական տաւնից եւ սրբոց վկայից մեղեդովք եւ տաղիւք, անոյշ եղանակաւ եւ ձայնիւ:

Եւ զի ջան էր սրբոյն վասն միաբանութեան ամենայն եկեղեցեաց. զի զեղծեալ եւ զապականեալ եւ զանփոյթ արարեալ կարգս եկեղեցւոյ սրբոյ ի ծուլից եւ ի մարմնասէր կամապաշտ առաջնորդաց, կամէր վերստին նորոգել եւ վասն այսորիկ եպերէին զնա խաւարարանոց եւ բիրտ մարդիկք եւ կարծէին զնա հերձուածող: Եւ ժողովեալ ի մի վայր եպիսկոպոսք եւ իշխանք եւ յղեալ կոչեցին զնա հրապարակաւ դատել եւ աքսորել զնա պատուհասիւ որպէս զհերձուածող: Եւ եկեալ առ սուրբն հրաւիրակքն զի տարցեն զնա: Իսկ սուրբն գիտացեալ զխորհուրդս նոցա եւ կամեցաւ յանդիմանել զանմտութիւնս նոցա: Ասէ ցնոսա՝ նախ կերիցուք հաց եւ ապա գնասցուք եւ ետ խորովել աղաւնիս եւ բերեալ առաջի նոցա, որպէս զի կերիցեն եւ աւրն այն ուրբաթ էր: Ընդ որս եւս առաւել նախանձեցան եւ զայթակղեցան հրաւիրակքն եւ ասեն. վարդապետ, ո՞չ է պահք, աւրս այս ուրբաթ: Եւ նա իբր յանդէտս եղեալ ասէ. Թողութիւն արարէք ինձ եղբարք, ես ոչ գիտացի եթէ պահք է աւրս այս: Եւ ասէ ցխորովեալ աղաւնիսն, արիք գնացէք ի տեղիս ձեր, զի պահք է աւրս: Եւ նոյն ժամայն ընդ ասել սրբոյն կենդանացան եւ թեւս առեալ թռեան նորափետուր զարդարեալ առաջի ամենեցուն եւ նոցա տեսեալ զզարմանալի սքանչելիսն որ եղեւ, հիացան եւ ապուշ մնացին: Եւ յարուցեալ անկան յոտս նորա եւ երկիր պագին նմա եւ թողութիւն յանցանաց հայցէին: Եւ երթեալ ասացին ամենեցուն զհրաշն զայն որ եղեւ: Եւ նոքա լուեալ ի չար խորհրդոցն եւ անուանեցին զնա Երկրորդ Լուսաւորիչ: Եւ երկրորդ Սքանչելագործ: Եւ նա այսպիսի սքանչելեաւքս եւ ճշմարտուէր մտաւքն խաստկրաւն վարուքն եւ աստուածարան վարդապետութեամբն փայլեաց յաշխարհի որպէս զարեգակն: Բայց չեւ եւս կատարեալ զընթացս աստի կենացս, այլ յերիտասարդական տիս վախճանեալ ի Թվականիս մերում Դ.Ճ. եւ ԾԲ. ամին: Զի իններորդ յոբելեան անցեալ էր ի Թվականէս եւ ի Ժ. մտեալ եւ Բ. ամ անցեալ. ի նոյն ամի եղեւ փոխումն զարմանագործ եւ սքանչելի առն Աստուծոյ սրբոյն Գրիգորի: Որոյ մաքուր մարմինն սրբասնեալ եղեալ կայ ի նոյն վանս Նարեկայ հուպ եկեղեցւոյն, որ է կառուցեալ յանուն սրբուհւոյն Սանդխտոյ: Ուստի բազում նշանք լինին ի փառս Քրիստոսի Աստուծոյ:

Յորոց ի բազմացն մի այս է, որ յետ ժամանակս Քուրդ մի տիրէր Նարեկայ: Եւ հաւ մի այն Քուրթն ի յեւր շինականն ետ ի Թուխս դնել եւ եղեալ կինն զհաւն եւ եհան զձագսն: Եւ շրջէր հաւն ձագերովն դ. աւր եւ երթեալ յահէ անձրեւի եմուտ հաւն ձագերովն ի ներքոյ երկանաքարի միոյ, որ յեցեալ էր յորմն պատին: Եւ յաղդմանէ չարին անկաւ երկանաքարն ի վերայ հաւին եւ ջարդեաց զհաւն ձագերովն: Իսկ կինն որ զհաւն ի Թուխս եղեալ էր ահաբեկեալ յահէ Քրթոյն յուսացաւ յԱստուած եւ յաղաւթս սրբոյն Գրիգորի: Դնէ զմեռած հաւն ձագերովն եւ փակէ մաղ մի եւ առեալ հաւատով տարաւ եդ առ գերեզման սրբոյն Գրիգորի եւ ինքն գնաց ի գործս իւր տառապանաց եւ ի միտս իւր աղաչէր զԱստուած եւ առ սուրբ Գրիգոր: Եւ իբրեւ ժամ մի անցաւ ի վերայ եսես զի գայր հաւն զրզալով կենդանացեալ ձագերովն եւ հիացեալ փառս ետուն Աստուծոյ եւ ձաղյարոյց սրբոյն Գրիգորի, որով աւրհնի Աստուած:

Հ. Հ. ՈՍԿԵԱՆ

ԱՆԻ ՔԱՂԱՔԸ

Անին խսկապէս «Հայաստանի մայրաքաղաք» չէ եղած, այլ Շիրակ գաւառում հաստատուած Բագրատունեաց իշխանութեան աթոռատեղի: Առաջին Բագրատունին, որ եկել, հաստատուել է Անիում, նախ նպատակ է ունեցել ոչ թէ բնակիլ, այլ իր գանձերը թաքցնել, պահել այնտեղ, որովհետեւ Անին Հինգերորդ դարում, բերդ է եղել, Ախուրեանի (կամ Արփաչայի) գետեզերքի ժայռերի եւ քարայրների մի մեծ չարքի վրայ վրայ, հիմնուած [1]:

Առաջին Բագրատունին, որ 887ին Շիրակի նահանգի վրայ թագաւորեց, աթոռատեղի ունենալով Անին, Աշոտն էր, «Իշխանաց իշխան» տիտղոսով, իբրեւ հայ զօրքի ընդհանուր հրամանատար: Երբ իր հայրենակից միւս հայ իշխանների կամ նախարարների կողմից նա թագաւոր հրատարակուեց, Աշոտ՝ «շահնշահ» այսինքն արքայից արքայ տիտղոսն առաւ: Թէ՛ այս եւ թէ՛ «աշխարհակալ» տիտղոսն՝ այն ժամանակ, կամ այն դարում պարզապէս տեղական նշանակութիւն ունէին, որովհետեւ կային ուրիշ, կէս անկախ մանր հայկական իշխաններ Հայաստանում, որոնք իրենք իրենց թագաւոր էին անուանում: Այս իշխաններն իսկապէս փոքրիկ միապետներ կամ արքայիկներ էին: Այս կերպով սրանք յիշեցնում էին 10 դար յառաջ, այնտեղ, նախկին Ուրարտուում, տիրող արքայիկներին:

Աշոտ Բագրատունին այս տիտղոսն ընդօրինակել էր Սասանեան արքաներից: Նա մեծ խոհեմութեամբ չարժելով կարողանում էր հաւասարակշռութիւն պահպանել Անիի հզօր դրացիների հետ, իր յարաբերութիւններում: Բիւզանդական կայսրը ճանաչեց նրա արքայական իշխանութիւնն, իսկ արաբական ամիրապետն մինչեւ իսկ արքայական թագ ուղարկեց նրան:

Աշոտի որդին եւ յաջորդը Սմբատ Ա. «աշխարհակալ» կոչուած, անկարող հանդիսացաւ այս հաւասարակշռութիւնը պահպանել եւ բիւզանդական ազդեցութեան տակ մտաւ: Այս պարազան պատերազմի պատճառ դարձաւ արաբներին, որոնք 904ին Սմբատին գերի բռնելով խաչեցին. այս հիման վրայ էլ Սմբատ կոչւում է «խոստովանող»: Այս Սմբատի ամենակարեւոր գործն է եղած Արտանուջի իր տոհմակից վրացի Բագրատունիների հետ բարեկամական դաշինք կնքելը: Հայ պատմիչ՝ Յովհ. կաթողիկոսի համաձայն Արտանուջի Կիւրապաղատը Ադառնասէ «որդիական խոնարհութեամբ» մօտեցել է Սմբատին եւ արժանացել է արքայավայել ընծաների:

Այս Սմբատի ժամանակ՝ Անին տնտեսական այնքան մեծ բարգաւաճման է հասել, որ ըստ պատմագրի «նոյն իսկ հողագործներն եւ հովիւները մետաքսէ զգեստներ էին հագնում»:

Սմբատից յետոյ Աշոտ «շահնշահ»՝ ստիպուած էր ընդունել արաբական հովանաւորութիւնը, որ առիթ տուաւ բիւզանդական կայսեր՝ նրա դէմ հանելու Անիի թագաւորութեան օրինաւոր ժառանգ Աշոտ Գ. Երկաթին, որ նրան արտաքսեց երկրից:

Աշոտ Երկաթին 930ին փոխանակել Աբասը աւելի արդիւնաւոր գործունէութիւն է ունեցած: Նա յաջողութեամբ վանեց հիւսիսային հրոսակախումբերի, «սարմատացիների» յարձակումները: Բայց նրա մեծագոյն գործն է եղած այն, որ նա ոչ միայն շինարարական խաղաղ աշխատանքներով Անիի թագաւորութիւնը զարգացրեց, այլ հովանաւորող հանդիսացաւ նաեւ մշակոյթի, քաջալերելով իր ժամանակի հայ պատմիչ, աստուածաբան եւ առ հասարակ ուսման նուիրուած անձերին:

Արաս իբրեւ աթոռատեղի էր ընտրել կարսը: Մասամբ այս եղաւ պատճառ, որ նրա մահից յետոյ, Կարս եւ Անի առանձին տարբեր թագաւորութիւններ դարձան:

Անին իրօք մայրաքաղաքի կերպարանք առաւ Աշոտ Ողորմածի ժամանակ, 954ին, երբ սա սկսեց պարիսպներ հիմնել աշտարակներով եւ պարիսպներից ներս ու դուրս, բազմաթիւ շէնքեր կառուցեց: Նա «Ողորմած» է կոչուել, որովհետեւ աղքատների եւ անդամալոյծների համար անկելանոց եւ հիւանդանոց է հիմնել, իսկ օտար եկւորների եւ պանդուխտների համար ապաստանարաններ: Այս շինարարութիւնն աւելի եւս զարգացաւ Աշոտի յաջորդ Սմբատ Բ.ի թագաւորութեան ժամանակ 974ին, երբ նա երկրորդ կամ արտաքին պարիսպներով շրջապատեց քաղաքն, որով Անիի պաշտպանողական դիրքն ուժեղացրեց:

Երբ Սմբատ վախճանեցաւ 990ին, յանկարծամահ, Անիի դռները բացուեցան նրա եղբօր, Գագիկ Ա.ի առջեւ, որ մինչեւ այն ժամանակ հալածուած էր իր եղբօրից:

Գագիկ Ա.ի ժամանակ Բագրատունիները իրենց ամենածաղկեալ վիճակն են ունեցել եւ մշակել են գիտութիւնն եւ գեղարուեստը: Գագիկի կինը Կաթրամիդէն հայ մշակոյթի գլխաւոր հովանաւորողն էր. նա էր, որ աւարտեց Անիի կաթողիկէն, որի շինութիւնն սկսել էր Սմբատ Բ.: Գագիկ էր, որ Տաշիրքն եւ Վրաստանի հարաւային մի մասը գրաւելով միացրեց Անիի թագաւորութեան եւ սկսեց կոչուիլ «Թագաւոր Հայոց եւ Վրաց»: Այս տիտղոսն իրական նշանակութիւն ունէր: Սմբատ Ա.ի ժամանակ, երբ Վրաց թագաւորութիւնը հայ Բագրատունեաց գերիշխանութեան էր ենթարկուած, Անիի թագաւորը նոյնպէս կոչւում էր «Թագաւոր Հայոց եւ Վրաց» [2]:

[1] Մառ, Անիի աւերակները (ռուսերէն), 1907, Պետերբուրգ:

[2] Н.Марръ, О раскопкахъ и радомахъ въ Ани. (Ն. Մառ, Պեղումներն եւ աշխատութիւններն Անիում): Պետերբուրգ 1907, էջ 36:

© National Library of Armenia

Անիի հայ առաջաւորները 1042ին երեք կուսակցութեան էին բաժանուած, Ազգային, Բիւզանդական եւ Վրացական։ Առաջինի ձգտումն էր Բագրատունեաց տոհմին հաւատարիմ մնալ եւ Անիի հայկական իշխանութիւնը զօրացնելով շարունակել։ Երկրորդը՝ տեսնելով, որ Անին մերձակայ մահմեդական ցեղերի արշաւանքների սպառնալիքի տակ էր գտնուում, ազատուելու միակ միջոց էր համարում Բիւզանդիոնին յանձնուիլը։ Իսկ Երրորդը յարած էր այն մտքին թէ այդ երկու ծրագիրներից ոչ մէկը օգտակար կարող էր լինել հայ ժողովրդին՝ Անիի անկախութիւնը պաշտպանելու տեսակէտից, ուստի աւելի նպատակայարմար էր գտնում դիմել Վրաստանին, որ այդ ժամանակ մեծապէս զօրացել էր եւ կարող էր անմիջապէս օգնել արտաքին թշնամիների դէմ։

Երկրորդ՝ այն է Բիւզանդասիրական կուսակցութիւնն էր, որ Վեստ Սարգիսի առաջնորդութեան տակ, ամէնից յառաջ աշխատեց իր ծրագիրը գործադրել, հիմնուելով նաեւ այն իբր թէ Իրաւական տեսակէտի վրայ, թէ Անին՝ կտակի այժով պատկանում էր Բիւզանդիոնին։ Բիւզանդացիք անմիջապէս օգտուեցան այս պարագայից եւ յունական բանակը մօտեցաւ Անիի պարիսպներին։ Բայց Անեցիք, ծերունի զօրավար իշխան Վահրամ Պահլաւունու ղեկավարութեան տակ, Ծաղկաձորում տրուած ճակատամարտի մէջ, եա մղեցին յունաց բանակը։ Անիշխանութիւնից ազատուելու համար Ազգային կուսակցութիւնը՝ Աշոտի որդի Գագիկ Բ.ին թագաւոր հրատարակելով, օծել տուեց Անիի Կաթողիկէում։ Գագիկ Բ. իր թագաւորութիւնը սկսեց բիւզանդասիրական կուսակցութեան պարագլուխներին կալանաւորելով, որոնք գրաւել էին Անիի միջնաբերդն եւ այնտեղ ամրացել։ Բայց նրա այս յաջողութիւնն երկար չտեւեց։ Գագիկ Բ. ինքն եւս հրապուրուեց Յոյներից եւ սրանց երդմնական խոստման վստահելով գնաց Կ. Պոլիս, ուր նա ստիպուեց հրաժարել Անիի թագաւորութիւնից, մի թեթեւ փոխարինութեամբ եւ վերջապէս 1079ին սպանուեց յոյներից։

Յոյները 1044ին գրաւեցին Անին, չնայելով միւս երկու կուսակցութիւնների յամառ ընդդիմութեան։ Գագիկ Բ.ի հեռանալովը Անին զաղարել էր հայկական իշխանութեան մայրաքաղաք լինելուց եւ կառավարւում էր Բիւզանդիոնի նշանակած զաւառապետներով, որոնք դուքս եւ կատեպան էին կոչւում։ Սրանց մէջ կային հայեր եւս, քաղկեդոնիկ, որոնք այս պատճառով՝ պարզապէս յոյն կամ վրացի են համարուել։ Առանձնապէս յիշատակութեան արժանի է Գրիգոր Բակուրեան, կամ ըստ Վրաց՝ Գրիգոլ Բակուրեանի, որ Անիում ամիրայութիւն կատարելուց յետոյ, անցել է Բիւզանդիոն եւ այնտեղ մեծ դիրք գրաւել իբրեւ պետական քաղաքական գործիչ եւ իր մատուցած ծառայութիւնների համար բիւզանդական կայսր Ալեքս Կոմենից վարձատրուել է ընդարձակ կալուածներով Բուլգարիայում։ Բակուրեան՝ 1083ին, իր վարչական բարձր պաշտօնը թողնելով կուսակրօնութիւն է ընդունել, վանք է մտել եւ լուրջ գիտական–գրական գործունէութիւն է ունեցել, որի մասին ընդարձակօրէն պիտի խօսուի, իր տեղում։

Գր. Բակուրեան՝ իշխում էր ոչ միայն Անիի այլ նաեւ Օլթիի, Կարսի եւ Կարինի վրայ, որոնք այդ ժամանակ նոյնպէս Վրաց տիրապետութեան տակ էին։ Կարսի բերդում երկու արձանագրութիւն կայ, կամ գոնէ կար, այս տիրապետութիւնը յիշեցնող, մէկը հայերէն, միւսը վրացերէն։ Հայերէնը խօսում է Մխարգրձել (Արգութեան) Իւանէի իշխանութեան մասին, որին Վրաստանի մեծ թագուհին Թամար՝ «աթաբէկ»ութեան աստիճան էր շնորհել որոշ վարչական արտօնութիւններով եւ նրա ժառանգն ու գուստրը Ռուսուդան նոյնպէս ընդունել եւ հաստատել էր այդ կոչումը։ Հայերէն արձանագրութիւնն ասում է. «Թվին ՈԶԳ ի թագաւորութեանս Ըռուսադանա յաթապակութիւնն Իւանէի մեք, Կարուց քրիստոնէքս չինեցաք զբրջներս ի հալալ արդեանց մերոց»։ Իսկ վրացերէնը պակասաւոր է, եւ տեղ տեղ եղծուած։ Ահա ինչպէս է յառաջ բերուած Հ. Ներսէս Սարգսեանից Բազմավէպում.

«(Վրացերէն տառերով) մէ կարխա ամիրա ման բա... ազամ ազ(աշէնէ)մ (էվոլիսա) ծէլսա...», յորում այսչափ ինչ իմացեալ լինի. «Ես Ռա... ազա, չինեցի... ի թագաւորութեան... յամի...»[3]։

Վրաստանի իշխանութիւնը կամ հաւանականաբար հովանաւորութիւնը Անի քաղաքի եւ շրջակայքի վրայ, տեղի է ունեցել ԺԱ. դարում, համբաւաւոր Մարիամ թագուհու ժամանակ, երբ նրա որդին Բագրատ Դ. այնչափ ուժեղացել էր, որ իր իշխանութեան ներքեւ ամբողջ Վրաստանը յաջողել էր միացնել։ Վրաց Տարեգիրքը գրում է. «Այնուհետեւ Բագրատ Դ. որ իշխել է 45 տարի (1027—1072) ուժեղացաւ եւ համբաւ շահեցաւ։ Նրա բախտից Վեստ Սարգիս միացաւ նրան՝ իրեն հետ բերելով 9 միջնաբերդ, որոնք կախում ունէին Անիից, բացի Անբերդից։ Անեցիք քաղաքը յանձնեցին Բագրատի մօրն, որ հօր կողմից իրաւունքներ ունէր Հայաստանի վրայ, իբրեւ Սենեքերիմ թագաւորի (Արծրունի) աղջիկը»։ Տարեգիրքը շարունակում է յիշատակելով, որ Բագրատ Դ.ի հակառակորդը իշխան Լիպարիտ (Օրբելեանի) դաւաճանութեամբ թագուհուց խլեց Անին եւ քաղաքի դռների առջեւ գերի բռնեց Արտանուջի, Ացխորի եւ Ցխիս–Ջուարի էրիսթավներին, որոնք թագաւորի կուսակիցներն էին։ Բիւզանդական Պատմութիւնը լռում է այս մասին։ Դիտելի է որ երբ Վրաց Տարեգիրքն որոշակի ասում է թէ Անեցիք քաղաքը յանձնեցին Մարիամ թագուհուն, հայ պատմագիրները, Արիստակէս եւ Ասողիկ խօսում են միայն յանձնելու մտադրութեան մասին[4]։

Անիի այս առաջին գրաւումը Վրացիների կողմից պէտք է լինի 1040 կամ 1041ին, որովհետեւ 1042ին յոյներն արդէն մտել էին Անի։

Վերեւ յիշուած Լիպարիտ Օրբելեանի ընդհարումներ է ունեցել սելջուկների հետ, ինչպէս պատմում է Խաչակրաց Պատմութեան ծանօթ հեղինակ Գրուսէ. «Սելջուկեան Թուրքերի պետ Տուղրիլ Բէկի հօրեղբօրորդին Իբրահիմ Ինալ 1048ին մեծ բանակով մտաւ այն հայկական զաւառներն, որոնք նոր կցուած էին բիւզանդական կայսրութեան։ Այս արշաւանքի ժամանակ նա աւերեց ամբողջ Վասպուրականն եւ հասաւ մինչեւ Արզն, որը հրդեհեց։ Բայց այդտեղ նրա դիմացն ելաւ բիւզանդա–վրացական զօրքը, վրացի իշխան Լիպարիտի հրամանատարութեան տակ։ Ընդհարման ժամանակ Լիպարիտ գերի ընկաւ, թէեւ պատերազմի դաշտը մնաց քրիստոնեաներին»։ Հեղինակն աւելացնում է թէ տոնեաները իրենց աւերն ու կողոպուտը տարուբերը իրենց ետեւն ու կողոպուտը տարուբերը

եւ այլոց ազգաց. եւ ամիրայ քաղաքին եւս, որ էր որդի Մանուչէի Ապլսուար անուն, անարի ոմն լինելով խորհէր մեկնիլ ի քաղաքէ անտի եւ եդ ի մտի վաճառել զքաղաքն ամիրային Կարուց վաթսուն հազար դենարի ըստ Վարդանայ: Զայն զգացեալ հաւատացելոց, անկան ի չփոթս եւ ազդ արարին Դաւթի Վրաց արքայի զխորհուրդ Ապլսուարայ. եւ ի գալ նորա մատնեցին զքաղաքն ի ձեռս նորուն յամին 1124: Եւ Դաւիթ առեալ զքաղաքն ոչ ումեք արար ինչ վնաս, այլ միայն կալաւ զամիրայն Ապլսուար եւ մաքրեաց զքաղաքն, եւս եւ զեկեղեցիս ի հեթանոսական պաշտամանց եւ զկաթողիկէ եկեղեցին Հայոց, զոր մզկիթ էին արարեալ պարսիկք, նորոգեաց եւ ետ օրհնել զայն եպիսկոպոսաց եւ քահանայից Հայոց, հանդիսիւ մեծաւ եւ կանգնեաց ի գմբէթ նորա զնշան սրբոյ Խաչին: Եւ յանձն արարեալ զքաղաքն Ապլիէթայ [6] իշխանի ումեմն վրացւոյ եւ որդւոյ նորա Իվանէի, այսինքն Յովհաննու, դարձաւ յաշխարհ իւր եւ տարաւ ընդ ինքեան զԱպլսուար ամիրայն ի Տփղիս: Յայնժամ բազումք ի Հայոց, որք յառաջագոյն ելեալ էին յԱնի քաղաքէ եւ ցրուեալ յայլեւայլ տեղիս, իբրեւ լուան թէ Անի անկաւ ի ձեռս Վրաց եւ կայ յանդորրու դարձան անդրէն ի նոյն եւ բնակեցան անդ [7]»:

Անին երկար չէ մնացել Վրաստանի իշխանութեան տակ: Ինչպէս տեսանք, Վրաց արքայ Դաւիթ Բ. Բագրատիոնին՝ իր մայրաքաղաք Տփղիսը պարսիկների բազմամեայ տիրապետութիւնից ազատելուց երկու տարի վերջն օգնութեան էր հասել հայ Բագրատունիներին եւ նրանց մայրաքաղաքն եւս ազատել օտար առպատակողներից: Դժբախտաբար Դաւիթ իր այդ վերջին մեծ յաղթութիւնից մի տարի վերջը վախճանել էր եւ այս պարագան քաջալերել էր իր թշնամիներին, իրենց պարտութեան վրէժն առնելու: Աբուլ Սուարի եղբայրն (ըստ ոմանց իր որդիներից մէկը) Փադլուն, որ Խորասան էր գտնւում, ուր գերի էր տարուած Մելիք շահի կողմից, տեղեկանալով իր հօր եւ եղբայրների վիճակի մասին եւ մանաւանդ Վրաց թագաւորի մահուանից խրախուսուելով, զօրք հաւաքեց եւ եկաւ պաշարեց Անին: Նա Անին պահանջում էր իբրեւ իր հօրից մնացած ժառանգութիւն: Անեցիք հերոսաբար պաշտպանուեցան եւ

[6] Ճշգրտագոյնը՝ Աբուլէթի Օրբէլեանի: Դաւիթ այս վրացի իշխանին եւ սրա որդուն է յանձնում Անիի կառավարութիւնը:

[7] Չամչեան, Գ., էջ 441:

չյանձնեցին քաղաքը: Այս պաշտպանութեան մէջ դիւցազնուհի է հանդիսացել անեցի մի հայ աղջիկ՝ Այծեմնիկ անունով: Փադլուն երբ տեսնում է թէ կռւով պիտի չկարողանայ քաղաքին տիրել, բանակցութեան է մտնում Աբուլէթի եւ Անեցի առաջաւորների հետ, խոստանալով եւ համոզելով նրանց թէ քաղաքն ամէն կերպ պիտի պաշտպանէ օտար առպատակողների դէմ եւ պիտի պայծառացնէ: Վրացի կառավարիչը՝ Աբուլէթ Օրբէլիանի եւ իր որդին Իվանէ՝ նկատելով, որ քաղաքը՝ Սելջուկեան թուրքերի նոր յարձակման սպառնալիքի տակ էր որոշում են համաձայնութեան գալ Փադլունի հետ եւ Անին զիջում են նրան:

Թրքական վտանգն, որից վախենում էին Անեցիք, շուտով իրականութիւն է դառնում: Նասրէդդին Սուքման, որ «Շահ Արմէն» տիտղոսն է կրել [8], 1161ին մեծ բանակով յարձակւում է եւ գրաւում Անին: Այս անգամ էլ Գիորգի Գ.՝ Դաւիթ Վերականգնողի յաջորդը օգնութեան հասաւ Անիին: Հայ պատմագիրներից Վարդան (էջ 93—99) երկարօրէն պատմում է այս անցքերը: Վրաց արքան 7000 մարտիկներով հայ եւ վրացի, յարձակւում է Շահ Արմէնի վրայ, որ 80.000 զօրք է ունեցել եւ յաղթում է նրան, նրա զօրքից 23.000ը կոտորելով: Սամուէլ Անեցի պատմիչը հաւատացնում է թէ «ինքն իր աչքովն է տեսել» այս մեծ կոտորածը: Քարթլիս Ցխովրէբան (Վրաց մեծ Տարեգիրքը) ընդարձակ կերպով արձանագրել է իր էջերում Վրաց թագաւորի այս փառաւոր յաղթութիւնը:

Ահա ինչ է գրում այս մասին նաեւ Գրիգոր Երէց՝ Մատթէոս Ուռհայեցու պատմութեան շարունակողը: «Հայոց 610ին (1161—1162) Վրաց թագաւորը Գէորգի՝ արշաւեց Անի, ամառ ժամանակ, մի երկուշաբթի օր: Պաշարեց քաղաքն եւ մի օր յետոյ գրաւեց, եւ բնակիչներից 1000 հոգի կոտորեց՝ քրիստոնեայ եւ անհաւատ: Նա թողեց Անիում 2000 զինուորից բաղկացած պահակախումբ եւ դարձաւ Վրաստան, հպարտ իր այս յաղթութիւնից: Սակայն Խելաթի տէրը Շահ-Արմէն 80.000 զինուորով յարձակուեց Անիի վրայ: Այս լսելով Վրաց թագաւորը անմիջապէս նորից վազեց Անի յաղթեց Շահ Ար-

[8] Այս բռնակալն, որի բուն անունը Միրման էր, Իբրահիմի որդի, Սուքմանի թոռ, իշխանութիւնը ձեռք անցնելու համար նոյն իսկ իր հարազատ զաւակներին չէ խնայել է: Brosset, Additions, էջ 247:

մէնին եւ ստիպեց նրա բանակը փախուստի դիմելու: Այս ճակատամարտում թշնամին կորցրեց 2000 գերի զօրապետով եւ 150 բարձրաստիճան էմիր: Գէորգի թագաւորը խլեց թշնամուց նաեւ ձիեր, ջորիներ, ուղտեր, վրաններ, զրահներ եւ այլ զէնքեր, ինչպէս նաեւ մեծ թւով ոչխարի հօտեր...: Գէորգի 40.000 դահեկանով գնեց Անիում, թշնամիների մօտ գտնուած գերիներին, քրիստոնեայ եւ անհաւատ... [9]»:

Երբ այս մեծ պարտութեան լուրը տարածւում է, բոլոր մահմեդական ցեղերի իշխանաւորները միանալով մեծ բանակ են կազմում եւ Վրաց փոքր բանակի վրայ յարձակուելով յաղթում են, եւ Անին գրաւում, ուր գահակալում է Սուլթան Արսլան Շահ: Սակայն 1174ին Վրացիք նոր ուժ են ստանում գլխաւորաբար հայ զինուորականութիւնից, եւ այս հայ-վրացական ուժը տիրում է Անիին: Այս անգամ հայ-վրացական Մխարգրձելի-Արղութեան իշխանական տոհմն էր, որ պիտի կառավարէր Անին՝ Վրաստանի մեծ թագուհու՝ Թամարի պաշտպանութեան շնորհիւ: Արղութեանները մեծ յաջողութեամբ կառավարել են Անին: Սակայն նրանք իրենց ընդարձակ հրամանատարութեան պատճառով, որ տարածւում էր ամբողջ Վրաստանի վրայ, ստիպուած էին յաճախ բացակայել Անիից: Այսպիսի մի բացակայութեան ժամանակ Արդաբիլի (Պարսկաստանում) սուլթանը մեծ հրոսակախումբով ներս է խուժում Անի, երբ Զատկի տօնի առթիւ քաղաքի պարիսպների դռները բաց էին: Այս խուժումը եւ Անիի գրաւումը հազիւ լսում են, Արղութեանները՝ Թամար թագուհու պաշտպանութեամբ, Վրացական բանակի գլուխ անցած յարձակւում են թշնամու վրայ եւ արշաւում են նոյն իսկ մինչեւ Արդաբիլ, ուր 12.000 հոգի կոտորում են առպատակողներից, ձերբակալում են սուլթանին եւ նրա ամբողջ ընտանիքն եւ մեծ աւարով մտնում են Անի:

Մխարգրձելի-Արղութեաններն եւ նրանց յաջորդները Անիում համարեայ թագաւորների դիրք եւ ուժ էին ստացել եւ ըստ այնմ կառավարում էին երկիրը: Անիի Բագրատունեաց հարստութեան անկումից յետոյ, այն շրջանում նոր մանր իշխանութիւնններ յառաջ եկան. այսպիսի էր, օրինակի համար

[9] Հայերէն բնագիրը ձեռքի տակ չունենալով, օգտուած եմ Dulaurierի զաղղ. թարգմանութիւնից, Paris 1858, էջ 361—362):

Խաչէնի տոհմն: Կար արդէն Լօռին, որ Անիի անկումից յետոյ աւելի կարեւորութիւն էր ստացել: Երբ Մխարգրձելի-Արղութեան տոհմը Անիի կառավարութեան գլուխ անցաւ, նրա առաջին գործն եղաւ Լօռին գրաւել, այն հիման վրայ թէ Արղութիւններն արդէն այնտեղ վարչական պաշտօն էին վարած տեղական նախկին արքայիկների քով [10]:

Թամար թագուհին, որ Արղութեանների հզօր պաշտպանն է եղած, հաստատեց նաեւ նրանց այս պահանջն եւ իշխանութիւնը Լօռիի վրայ: Թամարի այս վաւերացումը շատ կարեւոր էր մանաւանդ այն պատճառով, որ ինչպէս միւս հայկական նահանգները, որոնք Վրաստանի գերիշխանութիւնն էին ընդունել, Լօռին եւս քաղաքական խաղաղութիւն եւ ազատութիւն պիտի վայելէին: «Ազատութեան այս զգացումը, գրում է Մառ, աւելի նշմարւում էր Անիում: Եթէ հայ եւ վրացի պատմիչները չլինէին մենք այժմ չէինք կարող մտածել իսկ, թէ Անին որ եւ է կախում է ունեցել վրացիներից: Ցիրաւի Անիում ոչ արձանագրութիւնների եւ ոչ էլ յիշատակարանների մէջ բոլորովին չէ երեւում Վրաստանի քաղաքական տիրապետութիւնը. դոնէ մինչեւ այսօր չեն երեւան եկել համապատասխան նշաններ, ուստի շատ հաւանական է, որ այս տիրապետութիւնը միայն հովանաւորութեան բնոյթ էր կրում» [11]:

Ընդհանրապէս քաղաքական անկախութիւնը կորցնելուց յետոյ, Անին ԺԱ. դարի կէսից մինչեւ ԺԴ. դար ոչ միայն պահում էր իր հայկական քաղաքի դիրքն, այլ նոյն իսկ շարունակել է բարգաւաճիլ, որովհետեւ նրա

[10] Լօռիի այս իշխանական պատմական շրջանին աւելի մօտից ծանօթանալու համար պէտք է կարդալ հետեւեալ հրատարակութիւնները Հ. Ղեւոնդ Մովսէսեան, «Լօռի եւ Բագրատունի տան Կորիկեան ցեղի պատմութիւնը», Վիեննա, Մխիթ. Տպ., 1929, 2. Ռուս գիտնական Պախոմովի ուսումնասիրութիւնը՝ յատկապէս «Կորիկէ կիւրապաղատի դրամի մասին» (ռուսերէն) եւ 3. Լ. Մելիքսէթ-բէկի լրացուցիչ յօդուածը նոյն առարկայի մասին (նոյնպէս ռուսերէն) որոնք հրատարակուած են «Կովկասի Պատմա-Հնագիտական ճեմարանի» պարբերաթերթում (Извѣстия Кавказскаго Историко — Археологическаго Института, Թիֆլիս 1925).

Ինչպէս յայտնի է, բիւզանդական կայսրները Զ. դարից սկսած կիւրապաղատ տիտղոսն էին տալիս իբրեւ վարձատրութիւն, իրենց հպատակ օտար իշխաններին: Կիւրապաղատութեան նշաններն էին՝ ծիրանի, թագ եւ դրօշակ: Պատահում էր, որ այդ տիտղոսը կրում էին նոյն ընտանիքի մէկից աւելի անդամները, տանից իշխելու: Կորիկէ ցեղի յիշեալ դրամի մէջ՝ կիւրապաղատ բառը հայերէն արձանագրուած է կորապաղատ: Այսպէս էր գործածւում նաեւ Վրաստանում Ժ.—ԺԱ. դարում — վրացերէն՝ կուրապալատի:

[11] Անդ, վերեւ «Անիի աւերակները»:

© National Library of Armenia

վրայ տիրող օտարներն աշխատում էին անեցիների համակրութիւնը գրաւել, լայն ազատութիւն տալով տեղական հայ հաստատութիւններին, ինչպէս էր օրինակի համար, Անիի «Աւագների Խորհուրդը»: Երբեմն նրանք նոյն իսկ քաղաքի կառավարութիւնը յանձնում էին հայ իշխանական տներին: Այդպէս էր մանաւանդ վրացիների գրաւման ժամանակ:

Երբ 1236ին Արղութեանների իշխանութեան ժամանակ Թաթարները յարձակմամբ տիրեցին, նրանք մի առ ժամանակ չփոխեցին Անիի կառավարիչներին, որոնք պատրոն տիտղոսն էին կրում իրենց պաշտօնավարութեան առեն:

Հետեւեալ դարից (ԺԴ.) գտնում ենք հետեւեալ արձանագրութիւնը, որ ապացոյց է թէ Արղութեանների կառավարութիւնը դեռ եւս շարունակւում էր:

«8 թվին ՉՂԱ (791 + 551 = 1342) շնորհիւ եւ ողորմութեամբ բարերար եւ մարդասէրն Աստուծոյ ես աթապակ Վարհամ որդի Իւանէի (Բ.) որդու մեծին եւ հզաւրին Զաքարիայի (Բ.) վերստին նորոգեցի զկումբէթ Սուրբ Փրկչիս վասն երկար կենդանութեան իմոյ եւ յիշատ(ակ)ի մեզ եւ նախնեաց մերոց: Արդ ես Վասիլս որդի Գրիգորոյ առաքեցայ պատրոնին հրամանաւն աթապակ Վարհամայ եւ եկե(ա)լ կատարեցի մեծ ջանիւ եւ աշխատութեամբ զհրամաե(ա)ւս ինձ: Եւ սպասաւորք Սուրբ Փրկչիս ընձայ մատուցին մեզ զՎարդավառին կիրակին Բ. պատարագ[12]»:

Այս վիճակումն էր Անին, մինչեւ ԺԵ. դարի կէսն, երբ այնտեղ դեռ ոսկի դրամ էին կտրում: Ցաճախակի կրկնուող երկրաշարժների եւ այնուհետեւ նորանոր օտար արշաւանքների պատճառով է, որ Անիի ժողովուրդը սարսափած սկսել է գաղթել: ԺԶ. դարում Լէնկթիմուրի բարբարոսական արշաւանքից վերջը Անին, կողոպտուած եւ կործանուած, համարեա գեղի էր վերածուել եւ ապա դարձաւ բոլորովին անբնակ եւ աւերակ: ԺԸ. դարի կէսից սկսած մինչեւ ԺԹ. դարի կէսերը Անին՝ Խաթուն օղլու կոչուած թուրք գերդաստանի սեպհականութիւնն էր: 1877—1878ի ռուս թրքական պատերազմից յետոյ, երբ ռուս բանակը ընդհանուր հրամանատար հայազգի Լոռիս-Մելիքովի եւ այլ հայ զօրապետների ղեկավարութեամբ տիրեց Թրքական Հայաստանին, Անին եւս գրաւուելով կցուեց Կարսի նահանգի հետ Ռուսաստանին: Սկսաւ նոր, հետաքրքրական շրջան Անիի համար: Բագրատունեաց մայրաքաղաքը վերակենդանացաւ: Նա նոր ուխտատեղի դարձաւ: Մայր եկեղեցին վերանորոգուեց, նոր բնակարաններ շինուեցան, թանգարաններ հիմնուեցան, որոնք շուտով լցուեցան թանգարժէք յիշատակներով: Անիի նախկին հայ կառավարիչներից Աբուղամրեան՝ փառաւոր եկեղեցի էր կառուցել յանուն Ս. Փրկչի, որ 1878ին դեռ պահպանում էր իր հետաքրքրական որմնանկարները: Մի ուրիշ նշանաւոր Անեցի, Տիգրան Հոնենց, Արղութեանների ազգական, բազմաթիւ նոր շէնքեր է կառուցել՝ ինչպէս կուսանոց, վանք եւ եկեղեցի յանուն Գրիգոր Լուսաւորչի, որ Անիի աչքի ընկնող յիշատակարաններից մէկն է, Վրաց հովանաւորութեան ժամանակ վրացիք եւս իրենց համար յատուկ եկեղեցի են կառուցել: Վերոյիշեալ Տիգրան Հոնենց, յանուն Ս. Գրիգոր Լուսաւորչի եկեղեցի կառուցանողը՝ քաղկեդոնիկ հայ էր: Այս եկեղեցին ունէր գեղեցիկ որմնանկարներ եւ վրացերէն խուցուրի (եկեղեցական) տառերով արձանագրութիւններ: Այս առթիւ ահա ինչ ենք կարդում «Կովկասի Պատմա-Հնագիտական Ճեմարանի» ռուսերէն ժողովածոյի մէջ.

«Ներկայումս կարելի է իբրեւ հաստատ իրողութիւն ընդունել, որ Անիում, հայ եկեղեցիներում, վրացերէն եւ յունարէն լեզուներով արձանագրութիւններն արդիւնք են՝ տիրող քաղկեդոնական հոսանքին, որ տարածուած էր Բագրատունեաց վրացական ճիւղի տիրապետութեանն ենթարկուած հայկական գաւառներում: Հոնենցի կառուցած հայ եկեղեցւոյ որմնանկարները՝ ծանօթ այսպիսի նկարների մէջ ամենահիններն են[13]»:

Նախ քան Մառի ձեռնարկած ընդարձակ պեղումները, Անին գրաւել էր արդէն Պետերբուրգի ռուս հնագէտների եւ գիտնականների ուշադրութիւնը: Գիտութեանց Ճեմարանի վերատեսուչ Աբիխ 1845ին Անի այցելած ժամանակ այնտեղ գտել էր մի հետաքրքրական հայերէն արձանագրութիւն սեւ քարի վրայ փորագրուած, ընդ ամէնը 6 տողից բաղկացած: Աբիխ՝ Բրոսէին[14] էր յանձնել, իբրեւ հայագէտի, այդ արձանագրութեան ընթերցումն եւ թարգմանութիւնը: Բրոսէ անձամբ մեկնել է Անի եւ այնտեղ ուսումնասիրելով ներկայացրել Գիտութեանց Ճեմարանին, որ հրատարակել էր իր պարբերաթերթի մէջ: Սակայն Մառ 1910ին նորից քննել է եւ վերստուգելով ուղղել է Բրոսէի այդ թարգմանութիւնը: Ահա այդ արձանագրութեան բնագիրն եւ ընթերցումն ըստ Մառի:

Ի թվ. ոծե շնորհիւ ո-
ղորմութրն այ շինեց-
աւ դուռնս եւ բրջներս
յանուն մանդատորթա Խ-
ուցէս Շահանշահ Զաք-
արէի, ի ձեռն Զունդկան եղեւ:

ՈԾԵ (= 655 = 1206):

Յայտնի չէ թէ ո՞վ էր այդ Զունդիկը, ճարտարապե՞տ թէ փորագրիչ: Մառ ենթադրում է թէ Զաքարիայի (Մխարգրձել = Արգութեան զօրապետի) յանձնարարութիւնը կատարողն է եղած: Սա առաջին վկայութիւնն է, թուականի կարգով, որ Զաքարիայի կառավարութեան ժամանակ Անիում նոր շինութիւններ են կառուցուել: Այդ թուականից միայն երկու տարի վերջը նոյն Զաքարիա շինել է Անիի պարիսպների այն մասն, որ կանգնած է Գայլեձորի վրայ[15]:

Անիի աւերակների կանոնաւորապէս եւ հիմնօրէն ուսումնասիրութեան սկիզբ է դրուած 1892ին: Երբ Պրոֆ. Մառ յանձն առաւ անձամբ ղեկավարել այս ուսումնասիրութիւնն ընկերակից ունենալով ուրիշ հայ մասնագէտներ ինչպէս Օրբէլի եւ Թորամանեան, եւ մի ռուս նկարիչ, Պետերբուրգի Հայոց Եկեղեցական Խորհուրդը (պաշտօնական կոչումը՝ «Պետերբուրգի Հայ Եկեղեցիների Կալուածների Կառավարութեան Խորհուրդ»), որ դրամական խոշոր եկամուտներ ունէր հայազգի Լազարեան իշխանների նուիրած եկեղեցական կալուածներից, անմիջապէս 15,000 ռուբլի տրամադրեց Մառին Անիի պեղումների համար:

Մառ զբաղուել է նաեւ Անիի վրացական եկեղեցիով: Այս եկեղեցու վրայի վրացերէն արձանագրութիւնը պակասաւոր էր եւ այս պատճառով դժուար ընթեռնլի: Ուստի Մառ պեղել է եկեղեցու պատի տակը այս նպատակով, եւ մի ուրիշ արձանագրութիւն է գտել վրացերէն, որի վերջին տողը հայերէն է եղել: Սահմադինի այդ վրացերէն արձանագրութեան մէջ, փորագրուած 1288ին. Վրաց կաթողիկոս Եպիփանէսը խօսում է վրացածէս քահանաների եւ ծխականների մէջ ծագած վէճերի մասին: Եկեղեցականների պահանջած տուրքերն այնքան մեծ են եղել, որ դժգոհութիւն են առաջ բերել ժողովրդի մէջ...: Կաթողիկոսն աշխատում է կողմերն հաշտեցնել եւ յորդորում է վրացի ծխականներին չդժգոհել տուրքերի համար. այնտեղ նա ասում է. «քահանաներից ձեզ համար՝ աղօթքն է եւ պաշտօնակատարութիւնը. մի նեղանաք նրանց ձեր ձեռքից եկածը տալուց», իսկ հայերէն վերջաբանը հետեւեալն է. «Թվ. ՈԿԷ (667 = 1288), ես տէր գրիգոր Իր(իցապետ եպի)ս(կո)պոս, ես Վահրամ ամիրայ քաղաքիս վկայենք, որ կաթողիկոսին հրամանք եղ...»:

Պրոֆ. Մառ այս արձանագրութեան մէջ ուշադրութիւն է դարձնում այն կէտի վրայ, որ Վրաց կաթողիկոսի այս հրամանի տակ կայ տեղական հայ եպիսկոպոսի եւ ամիրայի «վկայեմքը»[16]:

Ն. Մառ երկար տարիներ, ամէն ամառ, նուիրուած էր այս մեծ ձեռնարկութեան, մեծ՝ թէ զուտ հնագիտական եւ թէ հայկական ազգային տեսակէտից, Մառ Կովկասի հայաբնակ հարուստ քաղաքներում, ինչպէս են Տփղիսն ու Բաքու, հրապարակախօսութիւններով հայ հասարակութեան հետաքրքրութիւնն ու հայրենասիրութիւնը շարժեց: Այս բանախօսութիւնների արդիւնքը նա յատկացրեց նոյն գործին: Տողերս գրողն անձամբ ներկայ էր այդպիսի մի բանախօսութեան, 1907ին: Բաքուի «Հայոց Կուլտուրական Միութեան» հրաւէրով Դեկտեմբեր 21, 22 եւ 23ին, Բաքուի քաղաքային մեծ Ակումբի ընդարձակ դահլիճում Մառ երեք սքանչելի դասախօսութիւն կարդաց, բնականաբար ռուսերէն, Անիի պատմական կացութեան եւ իր կատարած աշխատանքների մասին, որոնք մեծապէս գնահատուեցան ունկնդիր բազմամարդ հասարակութեան կողմից: Մառի այս դասախօսութիւնների համառօտութիւնն էր, թէ Անին նախ իբրեւ անառիկ բերդ պատկանում էր Կամսարականներին, որոնք ազգականութեամբ կապուած էին Արշակունեաց

[12] Կ. Բասմաջեան, Les Inscriptions arméniennes d'Ani, Revue de l'Orient Chretien, 1925—1926, Nr. 1—2, էջ 156:

[13] Д. П. Тордевъ, „Исвѣстія Кавказского Историко-Археологическаго Института въ Тифлиси". Петроградъ 1923. Т I.

[14] Բրոսէի մասին տես Վրաստան եւ Հայերը, Ա. Հատոր, Գլուխ Գ.:

[15] Պարբերաթերթ Կայսերական Գիտութեանց Ճեմարանի (ռուսերէն), 1910, էջ 1149—1151, ուր գտնւում է նաեւ այս արձանագրութեան լուսանկարը:

[16] Հանդէս Ամսօրեայ, 1911, էջ 698, Պրոֆ. Մառի նոր ուսումնասիրութիւնները, Ստ. Լիսիցեան:

© National Library of Armenia

արքայական ցեղին: Երբ աւելի հզօր մի տոհմ, այն է Բագրատունիները տիրեցին, Անին դարձաւ Արարատեան գաւառի՝ Շիրակի Թագաւորութեան մայրաքաղաք: Երբ Բագրատունիք զրկուեցան իշխանութիւնից Անին այնու ամենայնիւ շարունակեց ծաղկիլ, օտար տիրապետութեան շրջանում եւս, առանձնապէս ԺԲ. եւ ԺԳ. դարերում երբ նա իր բարգաւաճման զենիթին էր հասել ինչպէս պեղումները վկայեցին: Այս ժամանակ է, որ Անին ըստ աւանդութեան, 100,000 բնակիչ է ունեցել 1000 եկեղեցիով: Անին բովանդակում է իր մէջ բազմաթիւ յիշատակարաններ թէ Բագրատունեաց հարստութեան եւ թէ օտար տիրապետողների շրջաններից: Հետաքրքրական է, որ այնտեղ յիշատակարաններ կան՝ հին քրիստոնէական եւ նոր մահմետական զարդարանքների միացման ձեւերի տակ: Պեղումները գիտական տեսակէտից էլ մեծ արդիւնք են տուած: Գտնուած իրերը պահպանելու համար նախնապէս եկեղեցի եւ ապա Մանուչէի ձեռքով մզկիթի վերածուած հաստատուն շէնութիւնը յատկացուեց թանգարանի· իսկ երբ սա ամբողջապէս լցուեց հնութիւններով, 1908ին նոր թանգարան շինուեց:

Պեղումները մեծ աշխատանք են պահանջել, որովհետեւ միմիայն աւերակները մօտ 7 քիլոմետր տարածութեան վրայ շարուած էին իրար մօտ:

Մառ ունէր իր օգնականներն, գլխաւորաբար հայ ճարտարապետներ եւ հնագէտներ· ինչպէս Օրբէլի եւ Թորամանեան, եւ մի ռուս նկարիչ: 1910ին երեւան հանուեց քաղաքի հրապարակը, գտնուեց վերին աստիճանի հետաքրքրական ջրմուղն եւ մաքրուեցան Գագիկ Ա.ի կառուցած (1001—1015) հոյակապ տաճարի աւերակները: Այս տաճարը հիմնուել է Զուարթնոց եկեղեցու (Է. դար) ձեւով: Տաճարի արտաքին պատի վրայ հաստատուած է եղել հիմնադիր Գագիկ Ա.ի մեծ արձանը 3½ արշին բարձրութեամբ, քարաշէն եւ ներկուած: Թագաւորը ներկայացուած էր մօրուքաւոր, կարմիր վերարկու հագած, կուրծքի վրայ խաչ, իսկ գլխին դրած այն մեծ եւ ճոխ փակեղը (չալմա) որ արաբական ամիրապետը ընծայել է Գագիկին, իբրեւ արքայական աստիճանի նշան: Այսպիսի փաթթոց կրել են Անիի բոլոր թագաւորները: Արձանը կոտրտուած էր, բայց նրա բոլոր մասերն անթերի գտնուած են այնտեղ եւ ամբողջ արձանը վերականգնուած է Մառի օգնական ռուս նկարիչ-արձանագործ Պոլտորացկիի ձեռքով:

Պեղումների ժամանակ գտնուած իրերից հետաքրքրական է մի մեծ ջահ, որ հայկական եկեղեցական գեղարուեստին էր պատկանում: Գտնուած են նաեւ մի պղնձէ անօթ՝ ԺԲ.—ԺԳ. դարից, արաբերէն արձանագրութեամբ, պղնձէ դրամներ, բիւզանդական, արաբերէն եւ վրացերէն տառերով: Ինչպէս պեղումները ցոյց են տուել Անիի իշխանների պալատական կահ կարասիքը՝ համեմատելով ժողովրդի տների մէջ գտնուած ամանեղէնի հետ, ապացուցանում է, որ բագրատունիներից յետոյ իշխող Անիի կառավարիչների նիստ ու կացը հայկական կնիք չէ կրել, այլ բիւզանդական, արաբական, վրացական եւ թրքական:

Դեռ եւս կիսականգուն երկու մզկիթների մէջ պահպանուել են որմնանկարներ, որոնք իրենց գեղեցկութեամբ հաւասար են համարւում համբաւաւոր Ալհամբրայի արաբական արաբեսկներին:

Անիի այս պեղումների տուած արդիւնքը տեսնել ցանկացողների թիւն 1900ից սկսած մեծապէս աճել է: Այցելուներ եկել են ոչ միայն Կովկասի այլեւայլ մասերից, այլ եւ բուն Ռուսաստանից: Աւելորդ չեմ համարում յառաջբերել այստեղ հանգուցեալ Մատթէոս Բ. Իզմիրլեան կաթողիկոսի այցելութիւնը 1909ին, որին ներկայ եմ եղել:

Իզմիրլեան 1909 Մայիսին Պետերբուրգում Նիկոլա Բ. կայսեր ներկայանալուց յետոյ Մոսկուա, Նոր Նախիջեւան, Ռոստով եւ Բաքու քաղաքներում, հայ բնակչութեան կողմից սիրալիր ընդունելութիւն գտնելով, 1909 Յունիսի 14ին եկաւ Թիֆլիս, ուր թէ ռուս կառավարութեան, թէ վրացի ազնուականութեան եւ թէ բովանդակ հայ հասարակութեան կողմից, առանց կրօնի խտրութեան, մեծ հանդէսով եւ անկեղծ կերպով դիմաւորուել[17] էր: Նորընտիր կաթողիկոսն էջմիածին, իր աթոռատեղին չգնացած անհրաժեշտ էր համարել իր ուխտը կատարել: Այս ուխտը՝ Անին տեսնելն էր, որ իր դարաւոր գաղտնիքն երեւան էր հանել, Մառի անխոնջ աշխատութեան շնորհիւ:

Կաթողիկոսի այս մօտալուտ այցելութեան լուրը ընդհանուր հետաքրքրութիւն էր շարժել: Բագրատունեաց մայրաքաղաքն ուղ-

[17] Այս ընդունելութիւնների եւ այցելութիւնների մասին տես «Աղ. Մանրաշեանց, մեծ վաճառականն եւ բարեգործը, Վիեննա, Մխիթ. Տպ., 1931, էջ 150—156:

ղակի յարութիւն էր առել: Հազարաւոր հայ ուխտաւորներ ամէն կողմից լցրել էին աւերակ քաղաքն եւ պատսպարուել վրանների տակ: Ժամանակաւոր խանութներ եւ ճաշարաններ առեւտրական կենդանութիւն էին մտցրել: Աւերակների մէջ Անի բնակող «վանահօր» համար նոր բնակարան էր կառուցուած, որ այս առթիւ կարգի էր բերուած, Վեհափառին եւ իր հետեւորդներին ընդունելու համար: Իզմիրլեան հասաւ Անի Յունիս 25ին: Անի կրկին պարիսպ ունի· արտաքին պարիսպի առջեւ, ուրեմն քաղաքից դուրս, մեծ սեղան էր դրուած, որի շուրջը բոլորուել էին Անին կենդանացնողները՝ Նիկողայոս Մառ եւ իր բոլոր աշխատակիցները: Երկու պարիսպները միացրած էին մի մեծ տախտակով, որի վրայ խոշոր տառերով գրուած էր՝ «ԲԱՐԻ ԳԱԼՈՒՍՏ»: Իզմիրլեան իր ուղեւորի կառքիցն իջնելով մօտեցաւ այս սեղանին: Մառ մեծ հայագէտ, որ Պետերբուրգում, մի ամիս յառաջ ռուս կայսեր եւ Հայոց կաթողիկոսի տեսակցութեան ժամանակ թարգմանի պաշտօն էր կատարել, փութացել էր գալ Անի, կաթողիկոսին անձամբ ընդունելու եւ հարկ եղած բոլոր բացատրութիւնները տալու համար: Մառ՝ աղ ու հաց մատուցեց եւ մի սքանչելի գրաբար ճառով դիմաւորեց, որտեղ ի մէջ այլոց ասաց. «զկնի գրեթէ ինն դարուց, յեղելոյ յառաջնոյ հայրապետական այցելութենէ վայրիս, յակամայս հրաւիրեմ համարձակ՝ խօսիլ ի դիմաց աւերեալ եւ թափուր շինիս...»: Նա վերջացրեց այսպէս. «Եւ արդեամբ Անւոյ նիւթականի, մեռելոյ կեայ վերին Անի, Անի տեսականն, Անի գիտականն»:

Չափազանց սրտաշարժ էր տեսարանը: Իրօք ինն դարուց ի վեր Անին հայ հայրապետ չէր տեսել, այն էլ այսպէս բազմահազար ժողովրդով շրջապատուած, առաջին անգամ Իզմիրլեան էր այս գերագոյն պատիւն եւ բախտաւոր հանգամանքը վայելում: Սաստիկ յուզուած էր «երկաթեայ պատրիարքը»: Արտասուքի կաթիլներ լցուել, հոսում էին նրա աչքերից: Մի քանի րոպէ հարկ եղաւ, որ նա զսպէ իր յուզումն եւ ապա պատասխանեց.

«...Ես իմ ամբողջ կեանքիս մէջ կը բաղձայի տեսնել այս աւերակներն եւ տեսայ: Սաստիկ ուրախ եմ: Այո, յարգելի պրոֆէսոր, այս աւերակներն, որ կանգնած են այստեղ, կը յիշեցնեն հայուն՝ իր անցեալը, կը յիշեցնեն այն ժամանակներն երբ հայ կեանքն եւս կը պայծառանար, յաղթ եւ հոյակապ...: Դուք Ձեր պեղումներով ի լոյս աշխարհի կը յայտնէք տարաբախտ եւ տարագիր ժողովուրդի մը անցեալ պանծալի կեանքի պատկերը: Շարունակեցէք, ազնիւ Մառ, Ձեր բեղմնաւոր աշխատանքը»:

Իզմիրլեան այցելեց եւ մանրամասն քննեց պեղումների շնորհիւ լոյս աշխարհ եկած ազգային հնութիւնները՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի եկեղեցին, Մայր Տաճարը, Իշխանաց Տունը, Արքունի պալատը, Վրաց եկեղեցին, Առաքելոց եկեղեցին, պանդոկներն եւայլն: Կաթողիկոսը քննում եւ մեծ ուշադրութեամբ լսում էր Մառի եւ նրա գործակից ճարտարապետ Թորամանեանի բացատրութիւնները:

Ծանօթ մատենագիր հանգուցեալ Ատրպետ (Սարգիս Մուբայեաջեան), իմ վաղեմի դպրոցական ընկերս, որի հետ, իր հայրենի քաղաք Ալեքսանդրապոլից (այժմ Լէնինական) կառքով, հայկական բազմօղուտ Արագած լերան ստորոտը քերելով միասին եկել էինք Անի, եւ որ վաղուց եւ շատ մօտից ուսումնասիրած էր արդէն այդ աւերակները, քովս կանգնած, լրացուցիչ հետաքրքրական մանրամասնութիւններ էր աւելացնում իր կողմից ինձ համար, Մառի տուած տեղեկութիւնների վրայ:

Երկու օր մնաց Իզմիրլեան Անիում եւ նկարուեց Գագիկ Ա.ի արձանին կից:

Այս լուսանկարից բազմաթիւ օրինակներ տարին իրենց հետ Անիի այցելուները: Զմոռնամ յիշել, որ Գագիկ իր այս արձանի մէջ, ձեռքումը բռնած ունէր իր կառուցած տաճարի մանրադիր մի օրինակը: Իզմիրլեան Անիից վերջը նաեւ մերձակայ Ղօշավանքն այցելեց եւ ապա մեծ թափորով, 50ից աւելի կառքերում լցուած այցելուների ուղեկցութեամբ, մեկնեց Ալեքսանդրապոլ եւ այնտեղից էջմիածին:

Անի քաղաքը իր բազմադարեան ազգային գոյութեան յիշատակներովն անընդհատ այցելավայր էր դարձել այն օրից, երբ 1878ին կցուեց ռուսական Հայաստանին եւ Երեւանի Նահանգին միացաւ: Հայկական ոգին նորից սաւառնում էր այնտեղ: Դժբախտաբար 1914—1918ի պատերազմից յետոյ անողոք ճակատագիրը դարձեալ ընկճեց նրան, երբ Բրէստ-Լիտովսկի դաշնագրով նա դարձեալ անջատուեց եւ մտաւ Թրքական լուծի տակ...: Այդ օրից նա բոլորովին զրկուեց ամէն ուշադրութիւնից, նորից մահացաւ

© National Library of Armenia

կարծես ։ Արդարացաւ այն ողբն, որ իր մերձաւոր Ալեքսանդրոպոլ (այժմ Լենինական) քաղաքի բնիկներից, գգայուն սրտի տէր մի եկեղեցական վաղուց յօրինել էր նրա վրայ ։ Այս ողբն եւս կենդանացաւ եւ Կովկասի հայ ժողովուրդը վերստին սկսաւ երգի ձեւով զարթեցնել բազմաչարչար քաղաքի յիշատակը ։ Ահա այդ ողբի սկզբնական տողերը ·

«Անի ֆաղաֆ նստէր կու լայ
Զկայ բոող մի լայ, մի լայ ··· [18]» ։

(Շարունակելի ։) ՍԱՐՈՒԽԱՆ

ՑՈՒՑԱԿ ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳՐԱՑ Ի ԲՈՒԼԳԱՐԻԱ

(Շարունակութիւն ։)

21.

ԺԱՄՈՒ ԳԻՐՔ (ԿԱՄ ՀԱՒԱՔԱԾՈ՞Յ) Ի ՊԱԶԱՐՃԻԿ

ԹՈՒՂԹ·Ք՝ 549 ։ — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ $26\frac{1}{2} \times 20\frac{1}{2} \times 11\frac{1}{2}$ ։ — ԹԵՐԹ·Ք՝ այժմ իբր 46, իւրաքանչիւրը 12 թուղթ, մէկ մասը զուրկ թղթաթիւերէ, գրչէն նշանակուած չըլլալով ։ — ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն, $21 \times 16\frac{1}{2}$, ներքին լուսանցք՝ 1 սնթմ· ։ — ՏՈՂ·Ք՝ 34—35 ։ — ՆԻՒԹ՝ թուղթ հաստ եւ ողորկեալ ։ — ԿԱԶՄ՝ փայտեայ հին կաշեպատ ։ — ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՊԱՀՊԱՆԱԿ·Ք՝ չունի ։ — ՀԱՆԳԱՄԱՆ·Ք՝ գէշ չէ ։ Առաջին կողքի կաշին պատռած ։ Ինկած են մի քանի թերթեր ընդ մէջ թղ· 294—295, 299—300ի եւ վերջաւորութեան ։ Պոկուած կը կարծուին նաեւ Մարկոս, Ղուկաս եւ Յովհաննէս աւետարանիչներու նկարները՝ իւրաքանչիւրի սկզբնաւորութեան — ԴԱՏԱՐԿ՝ թղ· 2բ, 208ա ։ — ԳԻՐ՝ նոտրագիր, տեղ տեղ փոքրիկ տարբերութիւններով, կարծես ուրիշ գրչէ եղած ըլլային ։ — ԶԱՐԴԱԳԻՐ·Ք՝ անհամար, գրեթէ ամէն գլխոց սկիզբը, մեծ մասամբ բազմագոյն ։ — ԽՈՐԱԳԻՐ·Ք՝ Սկզբնատողք եւ Սկզբնատառք՝ յաճախ կարմիր կամ բազմագոյն ։ — ՆԿԱՐ·Ք՝ 3 հատ, ամբողջ էջերու վրայ, որոնք կը ներկայացնեն՝ թղ· 1բ՝ Սաղմոսաց սկիզբը՝ Դաւիթ· թղ· 208բ՝ Յիսուսի ծնունդը· թղ· 430բ՝ Աւետարաններու սկիզբը՝ Մատթէոս, համեստ գործեր ։ — ԽՈՐԱՆ·Ք՝ 4 հատ (թղ· 3ա, 209ա, 300ա եւ 431ա) ։ Բազմերանգ, սովորական գործեր ։ — ԽՈՐԱՆԻԿ·Ք՝ 3 հատ (թղ· 46ա, 81ա, 99բ) ։ — ԿԻՍԱԽՈՐԱՆ·Ք՝ 26 հատ ։ Միջակ աշխատութիւններ՝ երկու (կարմիր եւ կապոյտ) եւ աւելի գոյներով ։ — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴ·Ք՝ 622 հատ, նոյն, այլազան ։ — ԺԱՄԱՆԱԿ՝ ՌՃԺԶ—ՌՃԺԷ (= 1667—1668) ։ — ԳՐԻՉ՝ Տէր Գրիգոր քահանայ, որդի խոճա Միքայէլի ։ — ԾԱՂԿՈՂ՝ անշուշտ նոյնը ։ — ՏԵՂԻ՝ «Պուղտանու Սէհրաթֆաղաֆ» ։ — ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ·Ք՝ բազմաթիւ. բուն գրչէն կաեւորք՝ թղ· 45բ, 81ա, 99ա, 207բ, 395բ, 533բ, մանունք՝ թղ· 40բ, 199ա, 269ա, 337բ, 362ա, 364ա, 367ա, 386ա, 429բ· Նորք՝ թղ· 1ա, 2ա, 207բ, 430ա, 508բ, 548ա, 548բ ։ — ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ՝ Պազարջիկի Ս· Ստեփանոս եկեղեցւոյ ։

Մատեանս է ԺԱՄՈՒ ԳԻՐՔ, ուր ի մի ամփոփուած են պաշտաման կարեւոր մատեանք, որոնց մասին կայ եւ ցանկ մը սկիզբը՝ թղ· 1ա, *որ է՝*

«Այս է ցանկ գըրքիս որ կամիս գիտել · — Սաղմոս ի Դաւիթ· Երանեալ է այր ոչ գնաց ի կատարեալ ըստ կանոնն, Ա ։ ‖ Աղաւթք մասոյց, կատարեալ· Տէր եթէ զշրթունս իմ բանաս բերան իմ երգեսցէ · Բ ։ ‖ Տաւնացոյց· կատարեալ սկիզբէն մինչեւ վերջն · Գ ։ ‖ Շարակնոց, կատարեալ է ամենայն սրբոց առաքելոց մարգարէից վարդապետաց մարտիրոսաց եւ այլ ամենայն սըրբոց · Դ ։ ‖ Տարոյ գիրք· կատարեալ որք գրեցաւ ամենայն սրբոց · Ե ։ ‖ Աւետարանք, կատարեալք Մատթէոս, Մարկոս, Ղուկաս եւ Յովհաննէս · Զ ։ ‖ Մաշտոց վարդապետի զաւացեալն · Կնունքն երեխայից · Է · ‖ Զպսակ աւրհնէքն · Ը ։ ‖ Հաղորդութիւն · Թ ։ ‖ Աշխարհաթաղն եւ գայգւոջ · Ժ ։ ‖ Տղայաթաղն · եւ գայգւոջն · ԺԱ ։ ‖ Տնականն եւ ջաղ աւրհնէքն · ԺԲ ։ ‖ Ողէհանգիստ · ԺԳ ։ ‖ Զխաչ աւրհնէքն եւ զօծումն .. ԺԴ ։ ‖ Զեւթներրեակն կատարեալ այբէն մինչեւ ի քէն, որ է պարզատումար · բայց սերտ ուսիր որ չի մոլորիս · եւ հոգովդ չորիս ։»

Մատեանս ունի սա գլխաւոր բաժանմունքը ·

1 · Թղ · 3ա—45բ · Սաղմոս *ամբողջ՝ բաժնուած կանոնագլխոց, գուրգայից եւ սաղմոսաց (կը սկսի՝ «Երանեալ է այր որ ոչ գնաց ի խորհուրդ ամբարշտաց ···») ։*

2 · Թղ · 46ա—81բ · Ժամագիրք ։ *Սկիզբն՝ «Տէր եթէ զշրթունս իմ բանաս ···» ։*

3 · Թղ · 81ա—99ա · Տօնացոյց ։ *Սկիզբն՝ «Աստուածայայտնութեան ճրագալուցին առաջի աւուր գիշերն կանոնագլուխն · փառն ··» ։*

4 · Թղ · 99բ—207բ · Շարակնոց ։ *Սկիզբն՝ «Երգեցէք որդիք Սիոնի Երգ նոր ···» ։*

5 · Թղ · 209ա—429 · Ճաշոց · *որուն մէջ կան տարւոյն ամէն օրերուն ընթերցուածք ։*

---

[18] *Ողբի հեղինակն եկեղեցական է Աղեքս· վարդապետ* Արարատեան (*վախճ·* 1888*ին*), *Անդրկովկասի «Հայ-կաթոլիկաց Հոգեւոր Վարչութեան» ի երբեմն աւագ անդամը ։*

Ունի հետեւեալ գլխաւոր բաժանմունքը, որոնց իւրաքանչիւրը կը սկսի խորանով կամ կիսախորանով ·

Ա · Թղ · 209ա—236ա · *«Եւ հովիւք էին ի տեղ(ւ)ոջն յայնմիկ բացաւթեաղք որ պահէին ···» ։*

Բ · Թղ · 236ա—299բ · *«Բուն բարեկենդանին է առաւօտու ··· Ճրագ մարմնոյ ակն է ···» ։*

Գ · Թղ · 300ա—337բ · *«Ընթերցուածս ի գործոց առաքելոցն ։ Զբանն առաջին զոր արարի վասն ամենայնի ···» ։*

Դ · Թղ · 338ա—367ա · *«Երանելոյն Ներսէսի ասացեալ ի գալուստ հոգւոյն սրբոյ» ։*

Ե · Թղ · 367ա—386բ · *«Ի մեծի աւուր պայծառակերպութեան տօնին · Առաւօտուն ելանեն ի Թաբօր ···» ։*

Զ · Թղ · 386բ—395բ · *«Կիրակի ննջումն է Ամենաւրհնեալ սուրբ Աստուածածնին ։ Առաւօտուն եւ ճաշոյն ···» ։*

Է · Թղ · 396ա—429բ · *«Մեծի եւ կենսակիր սրբոյ Խաչին Կիրակէ Առաւօտին ··· ընթերց · Յառակաց · Դարձեալ եթէ ոք ի նաւ ելեալ ···» ։*

6 · Թղ · 431ա—508բ · Աւետարան ։

ա · Թղ · 431ա—452ա՝ *Մատթէոս ։*

բ · Թղ · 452ա—465բ՝ *Մարկոս ։*

գ · Թղ · 466ա—490ա՝ *Ղուկաս ։*

դ · Թղ · 490ա—508բ՝ *Յովհաննէս ։*

7 · Թղ · 509ա—533ա · Մաշտոց ։

Ա · Թղ · 509ա—512բ՝ *Կանոն Մկրտութեան ։ Ասեն սաղ · ի Թիւ · տէր ոչ բարձրացաւ սիրտ Գ անգամ ասեն · եւ ապա քահայաւ նայ ղաւթս ասէ · Տէր Աստուած մեր Աստուած բարերար ։*

Բ · Թղ · 512բ—514բ՝ *Կանոնն պսակ դնելոյ ։ Սաղ · Տէր ի զօրութեան քում ···*

Գ · Թղ · 514բ · *Կանոն պսակ վերացուցանելոյ ։*

Դ · Թղ · 514բ—515բ · *Կանոն հաղորդ տալոյ ։*

Ե · Թղ · 515բ—519բ · *Կանոն համաւրէն ննջեցելոց ի թաղման ։*

Զ · Թղ · 519բ—521ա · *Կանոն առաւօտուն ի գերեզման երթան ։*

Է · Թղ · 521ա—523բ · *Կանոն Տղայ թաղ տանելոյ ։*

Ը · Թղ · 523բ—524ա · *Առաւօտուն · այգոյն սաղմ · Աւրհնեցէք մանկունք զտէր ։*

Թ · Թղ · 524ա—526ա · *Կանոն · Ողեհանգիստ առնելոյ ննջեցելոց ։*

Ժ · Թղ · 526ա—526բ · *Եւ ապա աւրհնեն զաղն նախ ասեն սաղմ · ։*

ԺԱ · Թղ · 526բ—528ա · *Կանոն տնական աւրհնեալ Աստուածածին զխոստովանեալն ի դուռն եկեղեց(ւ)ոյ ։*

ԺԲ · Թղ · 528ա—533ա · *Կանոն խաչ աւրհնելոյ · բերեն եկեղեցին եւ լուանան ։*

8 · Թղ · 533բ—535ա · Պարզատումար, *մի քանի ծանօթութիւններով [տես Յիշատակագրութեանց կարգին] ։*

9 · Թղ · 535բ—547բ · Եւթներեակ Դ · ։

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ ։ (Բուն գրչէն են)՝ 1 · Թղ · 40բ · *Զառածեալս Գրիգոր երէցս յիշել աղաչեմ, միով հայր մերիւ ։ Թվ · ՌՃԺԶ* (= 1667) ։

2 · Թղ · 45բ · *Փառք ներողութեան Աստուծոյ · եւ մարդասիրութեան որ ետ կարողութիւն ծառային իւրոյ եւ կատարեց զսաղմոսս Դաւթեան թվ · ՌՃԺԶին* (= 1667) *եւ հոկտեմբեր ամսոյ ԺԹ ·ին աւրն ուրբաթի ձեռամբ մեղաւոր Գրիգոր քահանայի անարժան եւ անպիտան ծառայիս Աստուծոյ ։ Կարողութեամբն Աստուծոյ սկսեցի հոկտեմբեր Ա · եւ կացաւ ԺԹ ·ին ։*

3 · Թղ · 81ա · *Թվ · ՌՃԺԶ · Փառք ամենասուրբ երրորդութեան որ ետ մեղաւորիս ժամ, սկսեցի հոկտեմբերի ԺԹ · եւ օգնականութեամբ հոգոյն սրբոյ կատարեցաւ հոկտեմբերի Լ · օրն դշի · ձեռամբ սուտանուն Գրիգոր քահանայի սէհրաթ քաղաքացւոյ ։*

4 · Թ · 99ա · *Կարողութեամբն Աստուծոյ · սկսեցի զտօնացոյցս գրել հոկտեմբերի Լ եւ օգնութեամբն սուրբ հոգոյն · աւարտեցաւ նոյեմբերի Զ օրն դշի · ։ Թվ · ՌՃԺԶ ձեռամբ մեղաւոր տէր Գրիգորի որդոյ խոճա Միքայէլին ։*

5 · Թղ · 207բ · *Ըսկսայ · կարող Աստուծոյ զօրութեամբն գրել զշարակնոցս · նոյեմբեր Է · եւ օգնութեամբն սուրբ հոգոյն · աւարտեցաւ դեկտեմբերի ԼԱ թվ · ՌՃԺԷին* (= 1668) ։ *Ձեռամբ անարժան տէր Գրիգորի սուտանուն քահանայի որ միայն անուամբս կամ եւ հեռի եմ ի ճշմարտութենէն ։*

6 · Թղ · 337բ · *Ձեռամբ գրեցաւ տէր Գրիգոր սուտանուն քահանայի Թվ · ՌՃԺԷ փետրվար ամսոյ ԻԶ օրն դշի · ։ Բառասուն մանկանցն · ի մեծ պահքն բարով զաւրկ գայ ։*

7 · Թղ · 386բ · *Զմեղաւորս՝ զառածեալս՝ զանպիտանս՝ անօգուտս՝ զանարժանս՝ յիշել աղաչեմ միով հայր մերիւ եւ Աստուած*

© National Library of Armenia